ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ

Հավելված 2
2026 թ. փետրվարի 05 -ին
կնքված N ՏՄԱԿ.Մ 2026-1
պայմանագրի

# «ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1



1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» ՀՀ Տավուշի մարզում |
| Դրամաշնորհի N | «ԿԳՄՍ-ԴՇ-1193.01» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն: |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | Սկիզբ՝ 01 հունվար 2026թ. Ավարտ՝<br>31 դեկտեմբեր 2026թ. |
| Հաշվետու ժամանակահատված | 1-ին կիսամյակ՝ հունվար-հունիս 2026թ. |
| Ներկայացման օր | 01.07.2026թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սուսաննա Թաղնոսյան<br>«Հույսի կամուրջ» ՀԿ նախագահ |

2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ) գնահատում:
2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրում:
3. Կարողությունների զարգացում/վերապատրաստումներ:
4. Խորհրդատվություն:
5. Մշտադիտարկում:
6. Խելամիտ հարմարեցումների տրամադրում:
7. Իրազեկության բարձրացում:
8. Ծրագրի տեսանելիության ապահովում.

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1: ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ (ԿԱՊԿ, ԿՁԱՊԿ) ԳՆԱՀԱՏՈՒՄ



ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 132 երեխայի կրթության (և զարգացման)

առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝ պլանավորված 82-ի փոխարեն: Պլանավորված ցուցանիշից աճը պայմանավորված է ուսումնական հաստատությունների կողմից 50 երեխաների կրթության և կամ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի առաջին և հերթական գնահատման դիմումների ներկայացմամբ:

**<u>Նախադպրոցական ուսումնական հաստատություններ</u>**

Գնահատվել է 29 երեխա՝ պլանավորված 12-ի փոխարեն: Գնահատումն իրականացվել է խմբային պարապմունքների ընթացքում դիտարկմամբ, դաստիարակների և ծնողների հետ քննարկումներով և երեխայի զարգացման ոլորտների ուսումնասիրությամբ:

**<u>Հանրակրթական ուսումնական հաստատություններ</u>**

Գնահատվել է 103 երեխա՝ պլանավորված 70-ի փոխարեն: Կազմվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ արձանագրություններ և եզրակացություններ՝ ըստ ուսումնառության ընթացքում արձանագրված կարիքների և զարգացման հնարավորությունների և անհատական ուսուցման պլանով սահմանված արդյունքների:

**<u>Մասնագիտական կրթության և ուսուցման հաստատություններ</u>**

Հաշվետու ժամանակահատվածում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում չի իրականացվել:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (Խնդիր 1-ի իրականացման և ծրագրի նպատակի տեսանկյունից)

- Կրթության, ինչպես նաև կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում իրականացվել է 132 երեխայի համար՝ ծրագրով նախատեսված 82 երեխայի փոխարեն, այդ թվում.
  - 29 երեխա նախադպրոցական ուսումնական հաստատություններում ՝ նախատեսված 12-ի փոխարեն,
  - 103 երեխա հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ նախատեսված 70-ի փոխարեն,
  - մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող հաստատություններում գնահատում չի իրականացվել՝ նախատեսվածի համաձայն:
- Մշակվել և ամփոփվել է 477 անհատական ուսուցման պլան և 100 անհատական ուսուցման և զարգացման պլան, որոնց միջոցով հստակեցվել են յուրաքանչյուր երեխայի ուսումնառության և զարգացման նպատակները, խելամիտ հարմարեցումները, աջակցության միջոցները և մասնագիտական աջակցության ծառայությունների ծավալները:
- Գնահատված բոլոր երեխաների համար սահմանվել են ուսումնառության գործընթացում նրանց մասնակցությունն ու ակտիվությունը խթանող խելամիտ հարմարեցումներ:
- Գնահատված և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստացող երեխաներից զգալի մասի մոտ արձանագրվել է դասերին մասնակցության, ակտիվության, առաջադրանքների կատարման, իմացական-ճանաչողական գործընթացների բարելավման առաջընթաց:

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2: ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ**

<u>ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ</u>





Հաշվետու ժամանակահատվածում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ է ստացել 577 երեխա՝ նախատեսված 545-ի փոխարեն: Ծառայություններից օգտվողների թվի ավելացումը (+32 երեխա) պայմանավորված է ինչպես նոր գնահատված երեխաների ընդգրկմամբ, այնպես էլ այն դեպքերով, երբ նախկինում գնահատված երեխաները տվյալ եռամսյակում են ընդգրկվել մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացում: Մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրվել են համաձայն յուրաքանչյուր երեխայի անհատական ուսուցման և/կամ զարգացման պլանով սահմանված աջակցության տեսակի, ծավալի, տևողության և ժամանակացույցի:

**Նախադպրոցական ուսումնական հաստատություն**

Պլանավորված 90 երեխայի փոխարեն աջակցություն է ստացել է 100 սան: Ծառայությունները տրամադրվել են ըստ անհատական ուսուցման և զարգացման պլանների՝ խմբային պարապմունքների և անհատական աշխատանքների միջոցով՝ ինչպես մանկապարտեզներում, այնպես էլ կազմակերպության կենտրոններում:

**Հանրակրթական ուսումնական հաստատություն**

Պլանավորված 444 երեխայի փոխարեն աջակցություն է ստացել 467 երեխա: Ծառայությունները կազմակերպվել են դպրոցներում և կազմակերպության կենտրոններում՝ դասերից հետո և դասաժամերի ընթացքում, անհատական կամ փոքր խմբերում աշխատանքի ձևաչափով:

**Մասնագիտական կրթության և ուսուցման հաստատություն**

Հաշվետու ժամանակահատվածում 11 ուսանողի փոխարեն աջակցություն է ստացել 10 ուսանող: Աջակցության ծառայությունները տրամադրվել են ինչպես հաստատություններում, այնպես էլ

կազակերպության կենտրոններում՝ համապատասխան մասնագետների կողմից:

**Տնային ուսուցում**

Տնային ուսուցման պայմաններում կրթություն է ստանում 4 երեխա, որոնց տրամադրվել են սահմանված մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝ ներառյալ հատուկ մանկավարժի, հոգեբանի և սոցիալական մանկավարժի ծառայություններ՝ համաձայն անհատական ուսուցման պլանի:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (Խնդիր 1-ի իրականացման և ծրագրի նպատակի տեսանկյունից)

Ծառայություններից օգտվող երեխաներից առնվազն 409-ի ( շուրջ 71%) դեպքում մասնագետներն արձանագրել են չափելի առաջընթաց հետևյալ բնագավառներում՝

- առաջադրանքների կատարման աճ (21%)
- վարքի կարգավորում և ուշադրության կենտրոնացում 16%)
- շփման և համագործակցության հմտությունների բարելավում (11%)
- ուսուցման ընթացքում ինքնուրույնության բարձրացում (2%)

Ծառայությունները տրամադրվել են շաբաթական պարբերականությամբ՝ ըստ անհատական ուսուցման և կամ զարգացման պլանների՝ հատուկ մանկավարժի, հոգեբանի և սոցիալական մանկավարժի ներգրավմամբ:

Տնային ուսուցմամբ կրթություն ստացող 4 երեխայից 1-ի մոտ արձանագրվել է առաջընթաց՝ ուսուցման նկատմամբ մոտիվացիայի և ինքնուրույնության մակարդակի աճի տեսքով:

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3: ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ/ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է կարողությունների զարգացման 201 վերապատրաստում, որին մասնակցել են ընդհանուր 2810 մանկավարժական աշխատող՝ ներառյալ ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ, դասախոսներ, հատուկ մանկավարժական աջակցություն տրամադրող թիմի անդամներ, դաստիարակներ, հոգեբաններ և վարչական աշխատողներ։





**Նախադպրոցական ուսումնական հաստատություններ**

- Վերապատրաստումներ՝ 68 վերապատրաստում 54 հաստատությունում՝
- Մասնակիցների թիվը՝ 380 մարդ, այդ թվում՝

  - 251 դաստիարակ և մանկավարժ
  - 6 դաստիարակի օգնական
  - 24 հոգեբան
  - 42 վարչական աշխատող
  - 29 մեթոդիստ
  - 9 այլ
  - 19 ծնող

**Հանրակրթական ուսումնական հաստատություններ**

- Վերապատրաստումներ՝ 127 վերապատրաստում 82 հաստատությունում
- Մասնակիցների թիվը՝ 2310 մարդ, այդ թվում՝

  - մանկավարժական աշխատող -1599
  - ուսուցչի օգնական- 207
  - մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող թիմի անդամ 136
  - վարչական աշխատող 311
  - ծնող – 9
  - այլ-48

**Մասնագիտական կրթության և ուսուցման հաստատություններ**

- Վերապատրաստումներ՝ 6 վերապատրաստում 5 հաստատությունում

- Մասնակիցների թիվը՝ 120 մարդ, այդ թվում՝
- 
    - դասախոս 113
    - վարչական աշխատող 5
    - մասնագետ-2

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (Խնդիր 2-ի իրականացման և ծրագրի նպատակի տեսանկյունից)

- 2810 մանկավարժական աշխատող ստացել է մասնագիտական զարգացում՝ հուզական գրագիտությունը որպես բուլինգի կանխարգելման միջոց, ուսուցում և ներառում խաղի միջոցով, կրթության աջակցող միջոցներ. մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ, դեռահասությունը ներսից և դրսից, հոգեսոցիալական տոկունություն, երեխաների սոցիալ-հուզական զարգացումն ու հուզական գրագիտության խթանումը ուսումնական գործընթացում, ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման մեխանիզմները, վարքային առանձնահատկություններ ունեցող երեխաների ներառումն ուսումնական գործընթացում թեմաներով։
- Վերապատրաստումներից հետո շուրջ 136 հանրակրթական և նախադպրոցական հաստատություններում արձանագրվել են գործնական քայլեր խելամիտ հարմարեցումների կիրառման, դասավանդման մոտեցումների փոփոխման և ծնողի մասնակցության ընդլայնման ուղղությամբ։
- Մասնագիտական կրթության և ուսուցման 5 հաստատություններում տրամադրվել են գործնական ուղղորդումներ դեռահասության խնդիրները վեր հանելու, անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու, ուսանողների մասնագիտական ներառման հնարավորություններն ընդլայնելու նպատակով։

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4։ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ** (Խնդիր 2-ի իրականացման և ծրագրի նպատակի տեսանկյունից)

ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 309 խորհրդատվություն մարզի 140 ուսումնական հաստատություններում՝ ներառելով 1674 մասնակցի, այդ թվում՝

- 138ծնող
- 1536 մանկավարժական աշխատող՝ ներառյալ դաստիարակներ, ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող թիմի անդամներ և վարչական անձնակազմ։







**Նախադպրոցական ուսումնական հաստատություններ**

- Խորհրդատվություններ՝ 120 խորհրդատվություն 53 հաստատությունում, որոնց մասնակցել է 482 անձ:
- Թեմաներ՝ ԿԶԱՊԿ գնահատման և ԱՌԻԶՊ-ի մշակման գործընթացը, զարգացման միջավայրի ձևավորում, խելամիտ հարմարեցումների կիրառումը ՆԴ տարիքում, ԱՌԻԶՊ-ների քննարկում, ամփոփում, մանկական վախեր:

**Հանրակրթական ուսումնական հաստատություններ**

- Խորհրդատվություններ՝ 182 խորհրդատվություն 82 հաստատությունում, որոնց մասնակցել է 1138 անձ:
- Թեմաներ՝ ԱՌԻՊ-ի մշակում, իրականացում և գնահատում, խելամիտ հարմարեցումների իրականացում, մանկավարժահոգեբանական ծառայությունների համակարգում, ծնողի հետ համագործակցության ձևեր, երեխայի ուշադրության կենտրոնացմանն ուղղված մեթոդներ և մոտեցումներ, կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի գնահատման ընթացակարգ, մանկական վախեր, ծնողավարման հմտություններ:

**Մասնագիտական կրթության և ուսուցման հաստատություններ**

- Խորհրդատվություններ՝ 7 խորհրդատվություն 5 հաստատությունում, որոնց մասնակցել է 54 անձ:

- Թեմաներ՝ ուսումնական միջավայրի հարմարեցում, կոնկրետ մասնագիտական կրթության և ուսումնառության միջավայրի հարմարեցում, ուսուցման մեթոդների վերանայում, ԱՈւՊ-ների քննարկում:

  ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (Խնդիր 2-ի իրականացման և ծրագրի նպատակի տեսանկյունից)

- Խորհրդատվություններին մասնակցել է 1674 անձ, որոնցից 90%՝ մանկավարժական անձնակազմ, և 10%՝ ծնողներ: Սա նպաստել է ինչպես կրթության կազմակերպման գործընթացում թիմային աշխատանքի և շահագրգիռ կողմերի ներգրավվածության աստիճանի բարելավմանը, այնպես էլ ծնողին որպես լիարժեք գործընկերոջ ընկալելուն:
- Մասնակցած ծնողներից մոտ 32% (43 ծնող) նախկինում երբևէ չէր մասնակցել երեխայի կրթության կազմակերպման անհատական ուսուցման պլանի մշակման գործընթացին, սակայն այս հանդիպումներից հետո նրանք սկսել են մասնակցել գնահատման և պլանավորման փուլերին:
- 1536 մանկավարժական աշխատողներից շատերը խորհրդատվություններից հետո սկսել են կիրառել նոր գործնական մոտեցումներ՝ խելամիտ հարմարեցումների փորձարկումից մինչև ուսումնական միջավայրի փոփոխություն:
- Մասնագիտական կրթության և ուսուցման 4 հաստատություններում խորհրդատվություններից հետո սկսվել է դասընթացների բովանդակության և ուսուցման մեթոդների վերանայում՝ հաշվի

առնելով ուսանողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները։

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ** ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Կրթության կազմակերպման գործընթացի շարունակական մշտադիտարկումների շրջանակում իրականացվել են դասապրոցեսի դիտարկումներ, կրթության կազմակերպման անհատական պլանների ուսումնասիրություն, ծնող-դպրոց համագործակցության վերլուծություն։ Դիտարկումների ընթացքում վեր հանված խնդիրներն արձանագրվել են մանկավարժահոգեբանական աջակցության թիմի կողմից, կազմվել են ռաջարկությունների փաթեթներ՝ ուղղված մանկավարժների և ծնողների հետ հստակ գործողությունների մշակմանը։ Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ընդհանուր թվով 133 մշտադիտարկում՝

- 48 մշտադիտարկում՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում
- 80 մշտադիտարկում հանրակրթական ուսումնական հաստատություններում
- 5 մշտադիտարկում՝ մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունում։

ԱՐԴՅՈՒՆՔԵՐ (1-ին և 2-րդ խնդիրների իրականացման

և ծրագրի նպատակի տեսանկյունից )

- Մշակվել և ուսումնական հաստատություններին ներկայացվել է առաջարկությունների 133 փաթեթ՝ յուրաքանչյուր մշտադիտարկման հիման վրա։
- 14 նախադպրոցական ուսումնական հաստատությունում արդեն տրամադրվել են խորհրդատվություններ հոգեբանների գործառույթների վերաբերյալ։
- Մշտադիտարկումների արդյունքում երեխաների կրթության կազմակերպման անհատական ուսուցման պլանների և ուսումնական միջավայրի համապատասխանեցումը դարձել է ավելի նպատակային և իրապես ուսումնական առաջընթացին աջակցող։

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6։ ԽԵԼԱՄԻՏ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ**

ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ





Հաշվետու ժամանակահատվածում Տավուշի մարզի որևէ ուսումնական հաստատությունում ֆիզիկական միջավայրի հարմարեցումներ չեն իրականացվել։

Միաժամանակ, ապահովվել են խելամիտ հարմարեցումներ 103 երեխայի համար՝ սովորողների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքներից ելնելով։ Հարմարեցումները իրականացվել են հետևյալ ուսումնական հաստատություններում՝

- 14 հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ ներառելով 73 երեխա
- 11 նախակրթական ուսումնական հաստատությունում՝ ներառելով 30 երեխա

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (Ծրագրի նպատակի տեսանկյունից)

- 103 երեխայի համար ստեղծվել են հարմարեցված պայմաններ՝ կրթությանը լիարժեք մասնակցությունն ապահովելու նպատակով:
- Հարմարեցումները վերաբերվել են ուսուցման կազմակերպման ձևերին, ուսումնական նյութերի մատուցման եղանակներին, ժամանակային ճկունությանը և երեխաների ներգրավման խթանմանը:
- Խելամիտ հարմարեցումներ կիրառվել են 11 նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ հիմնվելով յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպման անհատական պլանով սահմանված կարիքների վրա:
- Խելամիտ հարմարեցումների շնորհիվ այս երեխաներից առնվազն 50 %-ը ցուցաբերել է ավելի ակտիվ մասնակցություն խմբային և անհատական ուսուցման ժամանակ, ինչը դիտարկվել է ինչպես մասնագետների, այնպես էլ մանկավարժների կողմից:

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 7. ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում ներառական կրթության գաղափարների տարածման և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ հարգանքի և դրական վերաբերմունքի ձևավորման նպատակով կազմակերպվել են մի շարք հանրային միջոցառումներ, դպրոցական նախաձեռնություններ և թեմատիկ օրեր:



- Գրքի տոնը շրջանակներում Տավուշի մարզի 22 դպրոցներ և 13 մանկապարտեզ կազմակերպության կողմից ստացել են մասնագիտական գրականության փոքրիկ փաթեթներ՝ այդ թվում ուղեցույցներ, ձեռնարկներ, մանկավարժների և ծնողների համար: 1 հանրակրթական դպրոցում նշվել է գրքի տոն՝ որին մասնակցել են 40 աշակերտներ:
- Միջոցառում**.** Մայրության և գեղեցկության տոն-վարպետաց դաս, որին մասնակցել են ԿԱՊԿ ունեցող երեխաներ և նրանց ծնողները, թվով 20 հոգի:
- Միջոցառում «Բարության դասեր»: Բարության դասեր են անցկացվել են մարզի 30 դպրոցներում՝ ներառելով տարրական և միջին դասարաններ: Դասերին մասնակցել է ընդհանուր 534 սովորող, որոնցից 125-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և հաշմանդամություն ունեցող երեխաներ էին:
- «Ապրել միասին, սովորել միասին» թատերական փառատոն: Մասնակցել են 24 հանրակրթական ուսումնական հաստատությունների 359 երեխաներ

- Միջոցառում «Երեխաների պաշտպանության միջազգային օր»: Մասնակցել են 400
- երեխաներ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (Խնդիր 4-ի՝ դրական վերաբերմունքի և հարգանքի ձևավորման տեսանկյունից)

Ընդհանուր առմամբ ներառականության, համերաշխության, բարության թեմաներով միջոցառումներին մասնակցել է 534 սովորող, այդ թվում՝ 125 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա:

- Ծնողների, համայնքային դերակատարների և սովորողների մասնակցությունը ձևավորել է ներգրավման միջավայր, որն ամրապնդում է ներառական կրթության ընկալումը ոչ միայն որպես մեթոդ, այլ՝ որպես արժեհամակարգ:
- UWC Դիլիջանի միջազգային դպրոցի հետ համագործակցության արդյունքում թվով 20 ԿԱՊԿ ունեցող երեխաներ մասնակցել են 6-օրյա նախագծային ճամբարին: Երեխաները՝ ծնողների և Հույսի կամուրջ ՀԿ Դիլիջանի մասնաճյուղի մասնագետների ուղեկցությամբ այցելել են միջազգային դպրոց՝ հնարավորություն ունենալով ծանոթանալ դպրոցին, մասնակցել UWC Դիլիջանի միջազգային դպրոցի ուսանողների կողմից կազմակերպված վարպետաց դասերին, սպորտային միջոցառումներին, բակային խաղերին:







ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 8. ԾՐԱԳՐԻ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹ

ՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ[1]

ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ծրագրի շրջանակում իրականացվել են ծրագրի տեսանելիությունն ապահովող միջոցառումներ ներառական կրթության արժեքների հանրայնացման և դրական ընկալման ձևավորման նպատակով: Լրատվական հրապարակումներն ընդգծել են թե՛ ոլորտային առաջընթացը, և թե՛ կոնկրետ երեխաների հաջողության պատմությունները՝ ընդգծելով ներառական կրթության մարդկային դեմքը:

Հիմնական գործողություններ.

- Միջոցառումների և վերապատրաստումների մասին վկայող հրապարակումներ սոցիալական ցանցերում (facebook, instagram)

Տեսանելիության գործիքներ.

Ծրագրի գործողությունները լուսաբանող ֆոտո և վիդեո նյութերը տարածվել են սոցիալական ցանցերով, ինչպես նաև կազմակերպության ֆեյսբուքյան էջով https://www.facebook.com/bridgeofhope/

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (Խնդիր 4-ի՝ դրական վերաբերմունքի և հարգանքի ձևավորման տեսանկյունից)

- Սովորողները մեծ ոգևորությամբ մասնակցել են ինտերակտիվ արտադասարանական

պարապմունքներին՝ ինքնաներկայանալով, մեկնաբանելով բարության և հանդուրժողականության մասին իրենց պատկերացումները: Հանդիպում-քննարկումների, գործնական վարժությունների, խաղ-մեթոդների կիրառման արդյունքում սովորողները զարգացրեցին ինքնաներկայացման, կարծիք արտահայտելու հմտությունները, ընկալեցին ներառական կրթության գաղափարախոսությունը:

- Մանկավարժական համակազմը քննարկումների միջոցով բացահայտել է հուզական ինտելեկտի բաղադրիչները, առանձնահատկությունները, հույզերի դերը նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում: Ծանոթացել է աշխատանքային կոլեկտիվում հույզերի արտահայտման առանձնահատկություններին և նշանակությանը:

---

[1] Ստորև բոլոր հրապարակումների հղումները.

https://www.instagram.com/stories/highlights/17929211964190256/

https://www.facebook.com/photo?fbid=1485088266959714&set=a.477437634391454
https://www.facebook.com/photo?fbid=1504065588395315&set=a.477437634391454
https://www.facebook.com/photo/?fbid=1506739614794579&set=a.477437634391454
https://www.facebook.com/reel/26320604014223584
https://www.facebook.com/reel/932095769191104
https://www.facebook.com/reel/4111228119187711
https://www.facebook.com/photo/?fbid=1512086747593199&set=pcb.1512092064259334
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid02CkDNtzjDQESUMuqLgFeigxrP4d5c9ko8nSjPTjXexVK8adTjgR1QYS5HyA4nS1qJl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid01QSdjYroGDN953F3bsg4oVqfWNEniRynEhffky2Z5krhGmNQbKRpT3gyFnTwPkLpl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid02ExD4ykvBHhQwyjd8wM2YBgiZKDrWdyDFg94XC2rxywtD4VPDYjv76gdjvGr8G7j8l
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid0KttNJyzjh1EjDgfuhLEWK3P4FwkBDhPorDFsvMCvWmJMaXe3nZnDZChu2xuraUiyl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid02pHzZAsHhcMGEqHMczLcFTw9TDEa25okLUyG9KLftXNGL196qkfBK2FghpGa7B9uHl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid02HofWYDBLohM6UWYRf8LjB24Q9wVK6bhPUmsms8cNDVWMZaY5MmqRtxCiPZeH9nKTl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid02q8AH5Y5imm9kWSoCccQCLCGAquwaLPsnYVnpyKvPXbrXGzR4m3S37VBZg8zME9Yhl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid027jHaNZGXBFdXypdUAm36XDDm53NNZr9kvL1sDcCduMJpu27zrx1jigsCHgJ17Zjxl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid0xetoFhSpS6N6expJB7FYUitdvwXZCQAvEwry624djqMqQJGr3d2TqjAuLmvP6FVDl
https://www.facebook.com/noyemberyancommunitylibrary/posts/pfbid02zWh6kSuKwDu6VEYjS2GjM4Re822g5gcLqCxtswxE3r2uVMpG289L2mCd2yvmnAaxl
https://www.facebook.com/reel/3602313433245135/?s=single_unit
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid02SyCqSbDsj7zcUGiRYUETidMSuXGEwzG67DXT6cXkz1bVpixBFmVAxuVyKrc25T8ml
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid02prFWsZCeHBnSz3mq9KkZvRcsiKkeeHmabA98wscCVfYgEe7rG6pGkN7wrGTKpFa6l
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid02d5MsdWV12LVdwyEnq2GVJNwoNM8Potz4F7HiCCMikuX6gbmmjcPbRcSnADEVZbCxl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid02MSv6v8YViNCkqRHCASTBU5qo3du8XnEikbLFF6T59qbKiHCASZEoGswnmgXjTBdxl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid0jagYgwzVyMskMDjtKpUd9vVt1sFi4TWmEnXYpJkGDaMEV7X47PQRTPQGM9677kCCl
https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02AkVce1XwVLb7om5d4z9CjMVSgw43JsrjC2QU9b5KTA4YiTri3DJyEoFnjcCPfUbol&id=100089949050748
https://www.facebook.com/reel/1297873292477482/?s=single_unit
https://www.facebook.com/KoghbSchool1/posts/pfbid025Dk7LmsrsA7gGBSBX3jBYs8NHH6joeMbvLhzsUYjsih

xBi3T6CJCKg85MnbCoxRYl
https://tavushmedia.am/hy/tavushum-anckacvum-e-aprel-miasin-sovorel-miasin-nerarakan-taterakan-paratony/?fbclid=IwY2xjawR3qqxleHRuA2FlbQIxMQBicmlkETFtdldKZUR3ZDdzSnJ2a2wwc3J0YwZhcHBfaWQQMjIyMDM5MTc4ODIwMDg5MgABHlTrA8zyh7VWxpql8sqklNP6UaVFMJvVLO0nNkxXLY4cZu2XvWK0mQ6CfoCn_aem_-qjPlWSbLqLH2ErkeGCshg
https://www.facebook.com/reel/2509221169527038
https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02b4WWwmg4DxEHot6mL8oQsT8tN9GqDm55ugTbnkqoTS4R2n9mquELnimoK6s7D3Uzl&id=100055645554968
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid02PKasA8uFqbKrUqxpVuivGKPoVQ7aDSf9ArZimsSfRUgd4M3LnUvVZAhXAyAv3E4Wl
https://www.facebook.com/dilijani.dproc/posts/pfbid02omaDHAR82U618aGb6cDhEHCSEfdviaaz2KWUsAPsww6Eo8zgwELHvM7Xfwt2L5PVl
https://www.facebook.com/school5ijevan/posts/pfbid0G2HtfQV59MFRVUaNEaP4KigxpQuvQ7T8GwsbbujCNPkouCyfMPhUyQLqnjrhX4jDl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid0srfmP9Cu777VgNwhuHRNv9Do1awEimvCKBQBNYVitmLcJAyDEz31Mt7ST7An1mbPl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid025h49k9MXkPFhQn3LFiumEK3D1isCn1Sor8RAzyt5eBjUY1C4mCkSvf7WXu7x93Ful
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid0258BY5uYGUM7aKQjFKg9vWtuxjWtCXM2ckdULHSPgW9YFaK7SnQisbz1zzrdKCM5xl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid02w22q5S9SFJ1YdFFriEYQ7S4T5zRLMcv3NKR5TVChjowaj1cTaC62XCb7CNA9bvenl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid036LBxnBTkMiY7pau5hgv1eA3Jyq8WiL1G8HDpymkgoWFTJe4BDnQNgweotEZddWDUl
https://www.facebook.com/degjavanihimnakandproc/posts/pfbid0BdHpAXaKoFjjGfoA27i8wfPxLYQMu7K5ULiUyYTnignGqEgtbaDHZQDksgVNuPkBl
https://www.facebook.com/getahovitidproc/posts/pfbid02EjNpwWEXFNVA7k5d4QZBcPUw3wvxo7bbs7HzknZTyYnKaibEfDHc9fKqwuLRUDsAl
https://www.facebook.com/bridgehope/posts/pfbid02ybywTHS78mJWDCFRwZuKGercetawbS5nWw3zz1dkt1W3n2WTBuxLKW64M2NQwLDbl

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Քաղած դասեր**.**

- Ծնողների ներգրավումը կրթության կազմակերպման գործընթացին ավելանում է, երբ նրանց հետ խորհրդատվությունները իրականացվում են շարունակաբար և անհատական մոտեցմամբ:
- Խելամիտ հարմարեցումների կիրառման վերաբերյալ հաջող փորձերը ավելի հեշտ տարածվում են, երբ դրանց կիրառման օրինակները փաստագրվում և փոխանցվում են մանկավարժների միջև:
- Ներառական միջոցառումներն առավել արդյունավետ են, երբ դպրոցներն իրենք են նախաձեռնող և ներգրավված՝ ոչ միայն որպես շահառու, այլ որպես համահեղինակ:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ) գնահատում
- Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում
- Կարողությունների զարգացում/վերապատրաստումներ
- Իրազեկության բարձրացում
- Ծրագրի տեսանելիության ապահովում

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:



**Համագործակցություն**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մի շարք համագործակցային գործողություններ, որոնք նախատեսված չէին ծրագրի աշխատանքային պլանով, սակայն էապես նպաստել են ծրագրի նպատակներին հասնելուն:

- Ուսումնական հաստատությունների հետ**.**
  Տեղի են ունեցել սերտ համագործակցություն մարզի նախադպրոցական, հանրակրթական, ինչպես նաև մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների հետ՝ ներառական նախաձեռնությունների առաջ մղման, մասնագիտական խորհրդատվությունների և համատեղ միջոցառումների իրականացման շրջանակում:
- Համայնքային և պետական կառույցների հետ**.**
  Իրականացվել են համակարգված աշխատանքներ Տավուշի մարզպետարանի, համայնքապետարանների կրթության և սոցիալական պաշտպանության բաժինների, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միացյալ սոցիալական ծառայության տարածքային գրասենյակների հետ:
- Մասնագիտացված հաստատությունների և գործընկերների հետ**.**
  Հաջող համագործակցություն է հաստատվել Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի, բժշկական կենտրոնների, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, ինչպես նաև Տավուշ հեռուստաընկերության, Դիլիջանի գրադարանների կենտրոնացված համակարգի, Դիլիջանի միջազգային դպրոցի (UWC) հետ՝ աջակցելով ինչպես մասնագիտական ներուժի զարգացմանը, այնպես էլ տեսանելիության բարձրացմանը:



Կազմեց՝
Սուսաննա Թաղևոսյան
/«Հույսի կամուրջ» ՀԿ նախագահ/

01.07.2026թ